ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ք. Իջևան *28.12.2013 թ.*

ՕՐԱԿԱՐԳ՝

1. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի 2012-2013թթ. ուստարվա գործունեության հաշվետվություն

   /Զեկուցող Ս. Ա. Առաքելյան/

2. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի 2013թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի կատարողական

   /Զեկուցող Ս. Ա. Առաքելյան/

3. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի 2014թ. եկամուտների և ծախսերի նախահաշիվ

   /Զեկուցող Ս. Ա. Առաքելյան/

4. Կառուցվածքային փոփոխություններ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում

   /Զեկուցող Ս. Ա. Առաքելյան/

5. Ուսումնամեթոդական վարչության կանոնադրության նախագծի հաստատում

   /Զեկուցող Ա.Ց.Դավթյան/

6. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում ուսումնական խորհրդատունների գործունեության կանոնակարգի նախագծի հաստատում

   /Զեկուցող Ա. Մարգարյան/

7. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի առաքելության լրամշակված տարբերակի նախագծի հաստատում

   /Զեկուցող Ա. Մարգարյան/

8. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի որակի ներքին ապահովման գործընթացների ֆինանսական ապահովման քաղաքականության նախագծի հաստատում

   /Զեկուցող Գ. Ավետիսյան/

9. Փոփոխություններ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կազմում

   /Զեկուցող Ս. Ա. Առաքելյան/

Մասնակցում էին գիտական խորհրդի 34 անդամներից 28-ը:

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ, տնօրեն Ս. Ա. Առաքելյանը:

1. Լսեցին – Ս.Ա. Առաքելյանի զեկուցումը *ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղի 2012-2013 ուստարվա գործունեության հաշվետվության մասին*

Ս.Ա.Առաքելյանը ծավալուն զեկուցմամբ ներկայացրեց մասնաճյուղի մեկամյա գործունեությունը: Գիտխորհրդի նախագահը առանձին ուղղություններով անդրադարձավ համալսարանի գործունեությանը: Ս. Առաքելյանը կարևորելով մասնաճյուղի տարաբնույթ հաջողությունները /գիտական, մանկավարժական, որակի ապահովման, փորձագիտական և այլն/, առավել մանրամասն անդրադարձավ նկատված թերություններին և բացթողումներին: Զեկուցողը ոչ միայն վեր հանեց առկա հիմնախնդիրները, այլ նաև կոնկրետ և գործնական քայլեր առաջարկեց բացթողումներն ու թերացումները շտկելու ուղղությամբ: Ս. Առաքելյանը զեկույցում նշեց, որ օրեր առաջ ևս ծավալուն հաշվետվությամբ հանդես է եկել ԵՊՀ-ի գիտական խորհրդի նիստում, ուր ներկայացրել է մասնաճյուղի մեկամյա գործունեությունը, ինչպես նաև մասնաճյուղի հետագա գործունեությունը էլ ավելի արդյունավետ դարձնելու նպատակով կատարել է գործնական առաջարկություններ, որոնք անվերապահորեն ընդունվել են մայր բուհի ղեկավարության կողմից: Ս. Առաքելյանը նշեց, որ հաշվետու ժամանակաշրջանում մասնաճյուղի գործունեությունը իրականացվել է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի զարգացման ռազմավարական ծրագրի /2011-2015թթ./ դրույթներին համահունչ: Սրան զուգահեռ զեկուցողը վերստին փաստեց, որ ընդհանուր առմամբ մասնաճյուղի հիմնական առաքելությունը մնացել է անփոփոխ. այն է՝ առաջին հերթին իբրև առաջնահերթություն դիտարկել մարզի աշխատաշուկայի պահանջները, սակայն չբավարարվել միայն մարզային մասշտաբով, այլ ընդհանուր առմամբ հետևողական քայլեր ձեռնարկել առավել ընդլայնելու բուհի գործունեությունը հիշյալ ուղղությամբ: Աշխատաշուկայի պահանջարկի միտումներից ելնելով՝ Առաքելյանը հիմնավորեց գալիք տարվա ընդունելության ցանկում նոր մասնագիտությունների ներառումը, ինչպես նաև որոշ մասնագիտությունների գծով վերանվանումները: Գիտխորհրդի նախագահը գոհունակությամբ փաստեց, որ ուսումնասիրությունների արդյունքներով նախկին Խորհրդային Միության տարածքում իր վարկանիշով ԵՊՀ-ն զբաղեցրել է 11-րդ տեղը, որը բավականին բարձր ցուցանիշ է: Զեկուցողը նկատեց, որ նման արդյունքը հեշտությամբ չի տրվել, և այն ձեռք է բերվել տևական նպատակասլաց աշխատանքի շնորհիվ, որտեղ իր ոչ

երկրորդական ավանդն է ունեցել նաև ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը: Որպեսզի այս ցուցանիշի վերաբերյալ հստակ պատկերացում ձևավորվի, Առաքելյանը նշեց, որ մեր անմիջական հարևանները նշված հետազոտության արդյունքներով բաժանում են 50-րդ հորիզոնականը: Զեկուցողը ներկաներին հորդորեց և պարտավորեցրեց, որ ձեռք բերված արդյունքը ոչ միայն հուսադրող է, այլ առաջին հերթին պարտավորեցնող, քանի որ անհրաժեշտ է առաջիկայում ևս պահպանել և էլ ավելի բարելավել նշված արդյունքը:

Գիտխորհրդի նախագահը հաշվետու ժամանակաշրջանում առավել կարևորեց մասնաճյուղի գործունեության վերաբերյալ տրված կողմնակի գնահատականները, որտեղ հատուկ վեր է հանված մեր կատարած աշխատանքը: Ս. Առաքելյանը այս առումով փաստեց, որ մարզային բուհերի գործունեությունը գտնվում է հանրապետության կրթական ոլորտի պատասխանատուների ուշադրության կենտրոնում: Իբրև օրինակ՝ տնօրենը մատնանշեց Գյումրիի և Վանաձորի բուհերի հետագա կարգավիճակի հարցը: Զեկուցողը շեշտեց, որ այդ բուհերը ուսումնասիրելով ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղի գործունեությունը, Կրթության և գիտության նախարարությանը առաջարկ են ներկայացրել, որպեսզի իրենց ևս տրվի մասնաճյուղի կարգավիճակ: Այս փաստը ևս կարևորվեց զեկուցողի կողմից, քանի որ մասնաճյուղի գործունեության անաչառ գնահատականներից մեկն էլ մյուս բուհերի կողմից մեր փորձը իբրև ուսանելի օրինակ դիտարկվելն է: Բուհին տրված գնահատականների առումով զեկուցողը միանգամայն կարևոր համարեց եվրոպական հավատարմագրման փորձագիտական խմբի համակարգային վերլուծությունը և տրված գնահատականները, որոնք նույնպես ամբողջության մեջ բավական գոհացուցիչ են եղել: Գիտխորհրդի նախագահը անդրադարձավ հավատարմագրման խմբի կատարած համակարգային ուսումնասիրությունը, որն իր գնահատականները տվել է տասը կետանոց սանդղակով, որի ինը կետերի պահանջները մասնաճյուղը իրականացրել է լիովին, և թերացումը նկատվել է միայն գիտական գործունեության ասպարեզում: Զեկուցողը փաստեց, որ նկատված թերությունը սոսկ համալսարանական չէ, և այն նկատելի է ողջ հանրապետության մասշտաբով: Այդուհանդերձ Առաքելյանը նշեց նաև, որ պետության գիտական արդյունքի շուրջ 60 տոկոսը պատկանում է ԵՊՀ-ին, իսկ գիտական գործունեությունը պահանջում է լուրջ ֆինանսատնտեսական ներդրումներ, բնական գիտությունների գծով՝ լաբորատոր հզոր բազա: Զեկուցողը գիտական գործունեության առաջընթացը կասեցնող օբյեկտիվ գործոնները մատնանշելուց բացի, նկատեց նաև, որ այս առումով մասնաճյուղում կան չիրացված

հնարավորություններ, և անհրաժեշտ համարեց, որպեսզի մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմը առավել ակտիվ և նախաձեռնողական գործունեություն ծավալի, քանի որ ունենալով գիտական հանդես, այնուամենայնիվ մեր դասախոսների գիտական ներկայությունը հանդեսի էջերում խիստ համեստ է: Գիտական գործունեությունը խթանելու ուղղությամբ գիտխորհրդի նախագահը կարևոր օղակ համարեց մասնագիտական ամբիոնների դերը, ուր պիտի համակարգված ձևով մշակվի գիտական գործունեության կոնկրետ ուղենիշներ, մասնագիտական խմբերի կողմից մշակվեն և կազմվեն մեթոդական ուղեցույցներ:

Հաշվետու ժամանաշրջանում զեկուցողը գիտական գործունեության ասպարեզում նշանակալից ձեռքերում համարեց մասնաճյուղի երեք դասախոսների կողմից թեկնածուական ատենախոսությունների հաջող պաշտպանությունը: Սրան զուգահեռ, Առաքելյանը էապես կարևորեց դասախոսների մասնագիտական որակների կատարելագործման գործընթացը, որը պիտի շարունակական բնույթ կրի: Այս առումով գիտխորհրդի նախագահը հաջողված քայլ համարեց բաց դասերի անցկացման փորձը, որը պիտի մանրակրկիտ և բազմակողմանի քննության նյութ դառնա և ամբիոնների, և տնօրենության նիստերում, կատարվի դասը վարելու առավել արդիական ու արդյունավետ մանկավարժական մեթոդների իրականացում:

Ս.Ա. Առաքելյանը անդրադարձավ նաև հաշվետու ժամանակաշրջանում մասնաճյուղում դիմորդների ընդունելության ցուցանիշներին, որոնք համեմատության մեջ դնելով հանրապետության մյուս բուհերի դիմորդների թվակազմի հետ, փաստեց, որ այդ առումով մասնաճյուղը շահեկանորեն առանձնանում է՝ զբաղեցնելով առաջատար դիրք:

Մասնաճյուղի հետագա առաջընթացը զեկուցողը մեծապես պայմանավորվեց որակյալ մասնագիտական կադրերով բուհի համալրմամբ: Այս ասպարեզում կարևորեց մասնաճյուղում սովորող ուսանողների ակտիվ և արդյունավետ գործունեությունը ուսանողական կազմակերպությունների շրջանակներում և ընդհանրապես համալսարանական բոլոր գործընթացներում: Զեկուցողը նկատեց նաև, որ նման ակտիվությունն արդեն իսկ տվել է ցանկալի արդյունքներ, քանի որ մասնաճյուղի ամենատարբեր ստորաբաժանումներում հաջողությամբ աշխատում են նաև մեր բուհի շրջանավարտներից շատերը:

Առաքելյանը ընդհանուր գծերով անդրադարձավ նաև մասնաճյուղի առաջիկա գործունեությանը, ուր առանձնակի կարևորություն տրվեց ժամանակակից տեղեկատվական

տեխնոլոգիաների ներդրմանը: Այս առումով զեկուցողը հրահանգեց, որպեսզի կրթության որակի ապահովման բաժինը կոնկրետ առաջարկներ ներկայացնի տեղեկատվական տեխնոլոգիաներին ուսումնական գործընթացում առավել լայն կիրառություն տալու ուղղությամբ: Նման տեխնոլոգիաների կիրառումը զեկուցողը կարևոր համարեց նաև բուհի օպերատիվ և արդյունավետ կառավարման գործում:

ՈՐՈՇԵՑԻՆ

1. 2012-2013 ուստարվա գործունեությունը գնահատել բավարար:

2. 2013-2014 ուստարվա երկրորդ կիսամյակի դասընթացը սկսելուց առաջ մասնաճյուղում դասավանդող բոլոր դասախոսները պետք է ունենան ամբիոններում քննարկված և ամբիոնի վարիչի կողմից վավերացված դասախոսություններ կամ դասախոսությունների թեզիսներ:

3. 2014 թվականին մասնաճյուղի շարունակական առաջընթացը ապահովելու համար տեղեկատվական տեխնոլոգիաների լայն կիրառությունը ընդգրկել բուհի առաջնահերթությունների ցանկում:

2. Լսեցին – Ս.Ա. Առաքելյանի զեկուցումը *ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի 2013թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի կատարողականի մասին*

Զեկուցողը մանրամասն և թվային տեսքով ներկայացրեց եկամուտները, որոնք համապատասխանում էին նախապես պլանավորածին: Այնուհետև զեկուցողը հանգամալից կերպով, ըստ ծրագրավորված ուղղությունների, մասնավորեց ծախսերի նախահաշիվը և թվային տվյալներով փաստարկվեց եկամուտների և ծախսերի նախահաշվի կատարողականը:

ՈՐՈՇԵՑԻՆ

1. Հաստատել 2013 թվականի եկամուտների և ծախսերի նախահաշվի կատարողականը:

3. Լսեցին – Ս.Ա. Առաքելյանի զեկուցումը *ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղում 2014թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի մասին*

Զեկուցողը ներկայացրեց մասնաճյուղի 2014թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի կազմման ընդհանուր տրամաբանությունը: Գիտխորհրդի նախագահը նշեց, որ քննարկման ներկայացված ֆինանսական փոստաթուղթը արտացոլում է մասնաճյուղի Ռազմավարական ծրագրի /2011-2015թթ/ դրույթները և ֆինանսական տեսանկյունից մանրակրկիտ հաշվարկված և հիմնավորված է:

ՈՐՈՇԵՑԻՆ

1. Հաստատել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի 2014թ. եկամուտների և ծախսերի նախահաշիվը:

4. Լսեցին – Ս.Ա. Առաքելյանի զեկուցումը *ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղում կառուցվածքային փոփոխություններ կատարելուն մասին*

Առաքելյանը զեկույցում նշեց, որ հաշվետու ժամանակաշրջանում մասնաճյուղի կառուցվածքային ստորաբաժանումների գործունեությունը մշտապես եղել է տնօրենության ուշադրության կենտրոնում: Զեկուցողը շեշտեց, որ հաճախակի հրավիրված տնօրենության, ինչպես նաև գիտական խորհրդի նիստում օրակարգային հարց է դարձել համալսարանական տարբեր օղակների գործունեության արդյունավետությունը: Մասնաճյուղի կազմում գործող կառուցվածքային ստորաբաժանումները հստակեցրել են հաստիքների համար նախատեսված գործառույթները, իրենց գործունեության վերաբերյալ ներկայացրել են հաշվետվություններ, որոնք ընդհանուր առմամբ դրական են գնահատվել: Այդուհանդերձ գիտխորհրդի նախագահը իր ելույթում հստակ և համոզիչ կողմերով ներկայացրեց մասնաճյուղում կառուցվածքային փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը՝ նկատելով, որ արդյունավետ և օպերատիվ կառավարման և դրա արդյունքում ցանկալի հաջողությունների հասնելու գործում հաճախ անհրաժեշտ է լինում կատարել նաև կառուցվածքային փոփոխություններ: Զեկուցողը նշեց նաև, որ նման փոփոխությունները պետք է դիտարկել հատկապես արդի կրթական ոլորտում տեղի ունեցող դինամիկ փոփոխությունների համատեքստում, ուստի նման ձեռնարկում Առաքելյանը գտավ, որ արտառոց որևէ երևույթ չպետք է տեսնել, այլ անհրաժեշտ է կառուցվածքային ստորաբաժանումները ձևավորել արդի կրթական պահանջներին համահունչ: Այնուհետև զեկուցողը ներկայացրեց մասնաճյուղի կառուցվածքում գործող ստորաբաժանումների փոփոխությունների և վերանվանումների հիմնավորումները:

Գիտխորհրդի նախագահը նախ անդրադարձավ Կրթության որակի ապահովման և գնահատման բաժնի գործառույթներն, շեշտեց, որ դրանք զգալիորեն ընդլայնվել են, և նոր պահանջներ են ներկայացվում այս ստորաբաժանմանը: Այդ նկատառումներից ելնելով՝ զեկուցողը անհրաժեշտ համարեց որոշ գործառույթների տարանջատման և առավել արդյունավետ ղեկավարման խնդիրը: Առաքելյանը համանման տրամաբանությամբ հիմնավորեց Ուսումնամեթոդական վարչության կազմում գործող Ուսումնական գործընթացի

պլանավորման և ծրագրամեթոդական բաժնի վերանվանման առաջարկը՝ գտնելով, որ այդտեղ ևս նկատելի է աշխատանքային լայն ծավալի կենտրոնացում: Զեկուցողը առավել նպատակահարմար համարեց, որպեսզի բաժինը զբաղվի ուսումնական գործընթացի պլանավորմամբ և վերահսկմամբ, քանի որ նման կերպ աշխատանքները կտարվեն մեկ հստակ ուղղությամբ և ակնհայտ կլինի աշխատանքի ողջ ընթացքը՝ պլանավորումից մինչև վերջնական արդյունք:

Հաջորդ փոփոխության առաջարկը, որ վերաբերում էր Ուսումնամեթոդական վարչության կառուցվածքում գործող Մինչհամալսարանական կրթության և մասնագիտական կողմնորոշման բաժնին, զեկուցողը շեշտեց, որ համալսարանական այս օղակի արդյունավետ աշխատանքով է պայմանավորված մասնաճյուղի հետագա գործունեության առաջընթացը, քանի որ բաժինը անմիջական աշխատանք է կատարում մասնաճյուղի հավանական դիմորդների հետ: Այս ուղղությամբ ներդրված ջանքերը զեկուցողը նորմալ գնահատեց, սակայն գտավ, որ անհրաժեշտ է այս ոլորտում նոր մոտեցումներ ևս որդեգրել: Առաքելյանը այս առումով խիստ կարևորեց տարատեսակ պրակտիկաների անցկացման արդյունավետությունը խթանելու ջանքերը, քանզի գործնական հմտությունների և կարողությունների տիրապետելու միջոցով միայն հնարավոր կլինի թողարկել բարձրորակ մասնագիտական կադրեր, որոնք էլ պիտի դառնան մեր հետագա առաջընթացի գրավականը:

Զեկուցողը նպատակահարմար համարեց, որ հիշյալ բաժնի աշխատանքային գործառույթներում ընդգրկի նաև պրակտիկաների կազմակերպումը, որոնց գերակշիռ մասը իրականացվում է մասնաճյուղից դուրս:

ՈՐՈՇԵՑԻՆ

1. Ուսումնամեթոդական վարչության կառուցվածքից հանել Կրթության որակի ապահովման և գնահատման բաժինը՝ վերանվանելով այն Մասնագիտական որակի ապահովման բաժնի:

2. Ուսումնամեթոդական վարչության կառուցվածքում գտնվող Ուսումնամեթոդական պլանավորման և ծրագրամեթոդական բաժինը վերանվանել Ուսումնական գործընթացի պլանավորման և վերահսկման բաժնի:

3. Ուսումնամեթոդական վարչության կառուցվածքում գտնվող Մինչհամալսարանական կրթության և մասնագիտական կողմնորոշման բաժինը վերանվանել Մասնագիտական կողմնորշման և պրակտիկայի կազմակերպման բաժնի:

5. Լսեցին – Ա.Ց. Դավթյանի զեկուցումը *Ուսումնամեթոդական վարչության կանոնադրության նախագծի հաստատման մասին*

Զեկուցողը հանգամանալից ներկայացրեց Ուսումնամեթոդական վարչության կանոնադրության նախագծի իրավական հիմքերը, խնդիրներն ու գործառույթները, կառուցվածքը և կառավարումը: Դավթյանը նշեց, որ ներկայացվող կանոնադրության նախագծում հստակորեն սահմանազատված են Ուսումնամեթոդական վարչության կազմում գտնվող բաժինների /Ուսումնական գործընթացի պլանավորման և վերահսկման, Մասնագիտական կողմնորոշման և պրակտիկաների կազմակերպման/ գործառույթները:

Զեկուցողը նշեց նաև, որ ներկայացվող նախագծում մանրամասն մշակվել և կանոնակարգվել է նաև մասնաճյուղի մյուս կառուցվածքային ստորաբաժանումների հետ փոխգործակցությունը: Դավթյանը նշեց, որ կանոնադրության նախագծի հաստատման պարագայում էական առաջընթաց կարող ենք արձանագրել բաժնի աշխատանքներում:

ՈՐՈՇԵՑԻՆ

1. Հաստատել Ուսումնամեթոդական վարչության կանոնադրությունը:

6. Լսեցին- Ա. Մարգարյանի զեկուցումը *ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղում ուսումնական խորհրդատուների գործունեության կանոնակարգի նախագծի հաստատման մասին*

Մարգարյանն իր խոսքում նշեց, որ գիտական խորհրդի քննարկմանը և հաստատմանը ներկայացված կանոնակրգի նախագիծը կազմել է Կրթության որակի ապահովման և գնահատման բաժինը: Զեկուցողը ներկայացրեց կանոնակարգի նախագծի հետագա լրամշակման գործընթացը, նշեց, որ այն ներկայացվել է նաև Որակի կառավարման հանձնաժողովին, ուր բոլոր շահագրգիռ կողմերի հետ համատեղ /ֆակուլտետի դեկաններ, ուսանողական խորհուրդ/ կատարվել է քննարկում և անհրաժեշտ փոփոխություններից և շտկումներից հետո ներկայացվել է գիտխորհրդի հաստատմանը: Զեկուցողը փաստեց, որ առաջադրված նախագիծը կազմվել է ՀՀ «Կրթության մասին», ՀՀ ԿԳ նախարարության «Բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնական գործընթացի կրեդիտային համակարգով կազմակերպման» օրինակելի կարգի /2007թ. հունիսի 19-ի թիվ 588-Ա/Ք հրաման/, ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության հիման վրա: Իսկ ուսումնական խորհուրդների գործունեության հիմքերը բխում են «Կրեդիտային համակարգով առկա ուսուցման ուսումնական գործընթացների կազմակերպման» և

«Կրեդիտային համակարգով հեռակա ուսուցման ուսումնական գործընթացների կազմակերպման» կարգերից: Այնուհետև զեկուցողը հանգամանալից ներկայացրեց Ուսումնական խորհուրդատուների ծառայության անհրաժեշտությունը, նրանց իրավունքներն ու պարտականությունները, վերապահված գործառույթները:

Եզրափակելով խոսքը՝ Ա. Մարգարյանը նշեց, որ կանոնակարգի նախագծի հաստատումը կհստակեցնի ուսման գործընթացի ողջ ընթացքը և նշված գործառույթների հետևողական իրացման պարագայում էական առաջընթաց կարող ենք արձանագրել ուսման որակի բարելավման ուղղությամբ:

ՈՐՈՇԵՑԻՆ

1. Հաստատել ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղում ուսումնական խորհրդատուների գործունեության կանոնակարգը:

7. Լսեցին – Ա. Մարգարյանի զեկուցումը *ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղի առաքելության լրամշակված տարբերակի նախագծի հաստատման մասին*

Զեկուցողը նշեց, որ ներկայացված փաստաթղթի նախագիծը մշակվել է որակի ապահովման պահանջներին համապատասխան: Ա. Մարգարյանը նկատեց, որ փաստաթղթի լրամշակված տարբերակում առավել հստակ և հասցեական են նշված մասնաճյուղի առաքելության հիմնական ուղղությունները: Մարգարյանը գիտական խորհրդի անդամներին և հրավիրվածներին տեղեկացրեց նաև, որ նախագիծը կազմվել է ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղի Կրթության որակի ապահովման և գնահատման բաժնի կողմից, այնուհետև ներկայացվել է ֆակուլտետների խորհրդի, տնօրենության և որակի կառավարման հանձնաժողովի քննարկմանը: Զեկուցողը փաստեց, որ հիշյալ ստորաբաժանումների կողմից արվել են ուսանելի դիտողություններ, կատարվել են խմբագրական և բովանդակային բնույթի անհրաժեշտ շտկումներ և լրամշակված տարբերակը ներկայացված է գիտական խորհրդի քննարկմանն ու հաստատմանը:

ՈՐՈՇԵՑԻՆ

1. Հաստատել ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղի առաքելությունը:

8. Լսեցին – Գ. Ավետիսյանի զեկուցումը *ԵՊՀ-ի մասնաճյուղի որակի ներքին ապահովման քաղաքականության մասին*

Զեկուցողը նշեց, որ մասնաճյուղի ԿՈԱԳ բաժինը սահմանված ժամկետում կազմել, մշակել և Որակի կառավարման հանձնաժողովին է ներկայացրել ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղի որակի ներքին ապահովման գործընթացների ֆինանսական ապահովման քաղաքականության նախագիծը, որը անհրաժեշտ մշակման ենթարկվելուց հետո ներկայացվել է գիտական խորհրդի հաստատմանը: Գ. Ավետիսյանը նշեց, որ ֆինանսական փաստաթղթի նախագծի իրավական հիմքն են կազմում ԵՊՀ ՊՈԱԿ ԻՄ-ի կանոնադրության 35 կետը և Ռազմավարական ծրագրի VIII՝ պահանջը: Զեկուցողը սպառիչ կերպով ներկայացրեց ֆինանսական մեխանիզմները, ֆինանսական հարաբերությունների կարգավորումը մասնակից կողմերի միջև /ԵՊՀ ԻՄ տնօրենության, ԵՊՀ ԻՄ-ի որակի ապահովման ստորաբաժանում, ԵՊՀ ԻՄ-ի որակի կառավարման հանձնաժողով, աշխատանքային խմբեր, աշխատակիցներ, գործընկերներ և այլն/:

Զեկուցողը նշեց, որ մասնաճյուղի որակի ներքին ապահովման գործընթացների ֆինանսական քաղաքականության նպատակները, խնդիրները և իրականացման մեխանիզմները իրատեսական են, ֆինանսական տեսանկյունից՝ ռեալ հաշվարկված և հիմնավորված: Ավետիսյանը, եզրափակելով խոսքը, նշեց, որ փաստաթուղթը շարադրված է հստակ և զերծ է տարընթերցումներից:

ՈՐՈՇԵՑԻՆ

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ Որակի ներքին ապահովման գործընթացների ֆինանսական ապահովման քաղաքականությունը:

9. Լսեցին – Ս. Առաքելյանի զեկուցումը *ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կազմում փոփոխություններ կատարելու մասին*

Առաքելյանը զեկույցում նշեց, որ առաջարկվող փոփոխությունները համահունչ են գիտական խորհրդի գործունեության տրամաբանությանը և համապատասխանում են ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի դրույթներին:

Զեկուցողը նկատեց, որ գիտական խորհրդի կազմում փոփոխությունները վերաբերում են ուսանողներին: Գիտխորհրդի նախագահը զեկույցում շեշտեց, որ անհրաժեշտություն է առաջացել, որպեսզի չորրորդ կուրսեցիներին փոխարինեն առավել ցածր կուրսեցիներ: Առաքելյանը գոհունակությամբ փաստեց, որ ավարտական կուսի ուսանողները ակտիվորեն մասնակցել են զանազան գիտական նստաշրջանների, սեմինարների և քննարկումների:

ՈՐՈՇԵՑԻՆ

1. ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կազմից ազատել Մերի Ֆրիկի Սահակյանին, Էրիկ Հրայրի Ավետիսյանին և Մելինե Կառլենի Մելիքյանին:

2. ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 3.2 կետի համաձայն գիտխորհրդի կազմում ընդգրկել Սոնա Գառնիկի Ղևոնդյանին (<<Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա>> մասնագիտության 2-րդ կուրս), Անուշավան Սարգսի Աղաջանյանին (<<Հայոց լեզու և գրականություն>> մասնագիտության 1-ին կուրս), Վանուհի Արամայիսի Վանեսյանին (<<Անգլերեն լեզու և գրականություն>> մասնագիտության 1-ին կուրս), Ռազմիկ Արմենի Հովսեփյանին (<<Տնտեսագիտության տեսություն>> մասնագիտության 2-րդ կուրս) և Աշխեն Վարդանի Զուրաբյանին (<<Պատմություն>> մասնագիտության 2-րդ կուրս):

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ս.Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Մ.Լ. ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ